

## 4. ԼՂՀ 2015Թ. ՄԱՐԴԱՀԱՄԱՐԸ ՈՐՊԵՍ ՀԱՄԱՊԵՏԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ

Մարդահամարի անցկացումն իրենից ներկայացնում է բազմաբնույթ և իրար հաջորդող, փոխկապակցված միջոցառումների շարք, որոնց իրականացումն առնչվում է կառավարության, տարբեր նախարարությունների, գերատեսչությունների ու կազմակերպությունների անմիջական մասնակցության հետ: Այդ պատճառով, ինչպես նաև «Մարդահամարի մասին» ԼՂՀ օրենքի հոդված 4 և ԼՂՀ կառավարության 2014թ. դեկտեմբերի 1-ի թիվ 822-Ն որոշման համաձայն, ստեղծվեցին 2015թ. մարդահամարի կազմակերպման ու անցկացման համապետական, շրջանային և Ստեփանակերտի քաղաքային հանձնաժողովները: ԼՂՀ 2015թվականի մարդահամարի կազմակերպման և անցկացման համապետական հանձնաժողովի պարբերաբար հրավիրվող նիստերին քննարկվել են ԼՂՀ 2015թ. մարդահամարի կազմակերպմանն առնչվող հարցեր, ընդունվել որոշումներ, հավանության արժանացվել փաստաթղթեր, առաջարկություններ ներկայացվել ԼՂՀ շրջվարչակազմերին և տեղական ինքնակառավարման մարմիններին: ԼՂՀ 2015թ. մարդահամարի կազմակերպման և անցկացման համապետական հանձնաժողովի նախագահ, ԼՂՀ փոխվարչապետի նախաձեռնությամբ և հանձնարարականով շրջվարչակազմերում և Ստեփանակերտի քաղաքապետարանում ԼՂՀ ԱՎԾ-ի կողմից կազմակերպվել և անցկացվել են հանդիպումներ հանրապետության բոլոր համայնքների ղեկավարների հետ: Հանդիպումների ընթացքում ներկայացվել են մարդահամարի անցկացման անհրաժեշտության հետ կապված խնդիրներ, տրվել են անհրաժեշտ մեթոդաբանական պարզաբանումներ, ինչպես նաև համայնքների ղեկավարներին են ներկայացվել իրենց օժանդակությանը սպասող հետևյալ խնդիրները.

- քաղաքներում և խոշոր գյուղերում հասցեային տնտեսության կարգավորումը,
- մարդահամարի և հրահանգչական տեղամասերի համար ժամանակավորապես աշխատասենյակների տրամադրումը՝ համապատասխանաբար երկուսուկես և մեկուկես ամիս ժամկետով,
- հաշվարարների թեկնածուների ներկայացումը համայնքի բնակիչներից: